

Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

Aravot Daily

օրաթերթ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

78/4174/ 27 ապրիլի 2012 ուրբաթ

ISSN 1829-2224
1 2 0 6 6
9 7718291222003

Մղձավանջի սոյառնակիքով

Կա հստակ օրինաչափություն, որը անվրեղ գործում է 1998 թվականից ի վեր: Հենց որ գալիս է նախընտրական շրջանը, իշխանությունը հիշում է «ցրտի եւ մթնոլորտի» մասին: Եթե նույնիսկ այդ ընտրություններին չի մասնակցում ՀՀԸ-ն կամ Լեւոն Տեր-Պետրոսյանը, իշխանությունը ցանկացած ընդդիմադիր թեկնածուի հետևում տեսնում է նրանց «ականջները», եւ աղաքցուցելու համար, թե որքան վատն են իրենց մրցակիցները, մեջտեղ է բերում 90-ականների «սարսափներն» ու «մղձավանջները»: Քանի որ տվյալ «հնարքը» կրկնվում է արդեն առնվազն 6-րդ անգամ, հակված են մտածելու, որ բարոզական այդ «գեները» հաջողության այս կամ այն աստիճանով «կրակում է» բնագոյններով արդող մարդկանց համար այդ տարիների կենցաղային վատ դրամները իսկապես «հզոր փաստարկ» են: Այս օրերին Ֆեյսբուքում լայն տարածում է գտել լուսանկարների շարք, որտեղ դատարանում են հացի հերթերը, բարեգործական վանդիկի բաժանման գործընթացը եւ այլ սարսափազդու դրամներ՝ «չենք ների ՀՀԸ-ին» մակագրություններով: Դա, իհարկե, դեռ «ժողովրդի» բուն «կինոն» ցույց են տալու ՀՀԿ-ի տաղանդավոր հոնտորները՝ Արտաշես Գեղամյանի գլխավորությամբ, որոնք «կթարմացնեն ժողովրդի հիշողությունը», իսկ ավելի շուտ՝ բնագոյնները, էնցիանները:

Ընդհանրապես, մեր քաղաքական (եւ ինչո՞ւ միայն քաղաքական) մշակույթը հիմնված է բացասական հույզեր արթնացնելու վրա, եւ դրանում եւ տեսնում են մեր զարգացման կարեւորագույն խոչընդոտներից մեկը: Այս 18 տարում չի եղել մի ընտրություն, երբ ընդդիմությունը չափի. «ժողովուրդ, մենք մեզք է օր առաջ ազատվենք այս մղձավանջից: Եթե սրանք եւս մի քանի տարի մնան իշխանության գլուխ, Հայաստանը կկործանվի, կվերանա, կքնուկուրվի աշխարհիս երեսից»: Իշխանությունները խոսում են «ՀՀԸ-ական մղձավանջի», իսկ ՀՀԸ-ականները՝ «հանրապետական մղձավանջի» մասին: Ոչ ոք չի դիմում քաղաքացիներին՝ «եկեք մեակերդե՛ք բոլորիս համար ընդունելի նպատակներ» եւ դաժանելով մեր բոլոր տարածաշրջանները՝ շարժվենք այդ ուղղությամբ»: Վրաստանի հաջողությունները դաժանաբանական են հենց այդ «կոնսենսուսային» գաղափարների առկայությամբ, ոչ թե նրանով, որ Սաակաշվիլին մեր լիդերներից ավելի ազնիվ է, ավելի լեգիտիմ է կամ ավելի տաղանդավոր:

Իրականում ոչ 90-ականներին, ոչ դրանցից առաջ, ոչ էլ դրանցից հետո մղձավանջ չի եղել: Եղել են մեր երկրի համար օրհասական դաժան, օրհնակ՝ հենց այդ՝ 90-ական թվականներին, երբ հանրապետությունում ցրտեցի երկու օրվա դաժար եր մնացել, կամ երբ հակառակորդը քիչ էր մնում՝ նորից փակել Լաչինի միջանցքը: Դրանք, ինչ խոսք, դրամատիկ իրավիճակներ էին, որոնցից մեր ժողովուրդը դատվում է դուրս եկել: Դրանց հետ համեմատած քաղաքական միավորների շահելու նպատակով անցյալը կամ ներկան «դրամատիզացնելու» փորձերը անլուրջ եւ բավականին տգեղ են թվում:

Մղձավանջը կամ դրախտը խիստ հարաբերական հասկացություններ են: Դրանք ոչ միայն հարաբերական են, այլեւ չափազանց սուբյեկտիվ, անհատական: Ենթադրենք, մարդը կարող է ունենալ չափազանցված անբիցիաներ կամ իր առաջ դնել անհրաժեշտելի նպատակներ, եւ երբ հաջողության չի հասնում, կյանքը դառնում է մղձավանջ իր եւ իր մերձավորների համար: Եվ հակառակը՝ եթե մարդը գտել է, թեկուզ համեստ, բայց ի՞ր տեղը կյանքում, աղա անկախ բոլոր ռեժիմներից՝ սարսափներն ու մղձավանջները նրան չեն սոյառնում:

ԱՐԱՍ ԱՐԱՐԱՍԱՅԱՆ

Հաշմանդան կինը Տեր-Պետրոսյանին ասելիք ուներ



Երեկ Եղեգնաձորում ՀԱԿ-ի հանրահավաքից հետո մի կին հազիվազ վազելով, ավելը ձեռքից՝ ուզում էր մոտենալ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին, սակայն չհասցրեց՝ ՀԱԿ առաջնորդը հաշմանդան կնոջը չնկատեց ու շուտ հեռացավ: Aravot.am-ի միջոցով նա խնդրեց փոխանցել, որ ինքը Լեւոն Տեր-Պետրոսյանին սիրում, վատախում է, ծայրը նրան է տալու, բայց ուզում է, որ վերջինս իրեն մի խոստում տա, որ հաշմանդանություն ունեցողների համար առողջադաշնական ծառայությունները անվճար է դարձնելու: Այդ կինը՝ Անահիտ Սարգսյանը, Եղեգնաձորում հավաքարար է աշխատում, մաքրում է փողոցները եւ արդյունքում չենքից աշխատավարձով ու 21 հազար դրամ հաշմանդանության թոշակով. «Ես միայնակ, անժառանգ հաշմանդան եմ: Նոյապետը կտրել են, ասել են՝ աշխատավարձը բարձր է: Խրոնիկ սեղսիսով եմ տառապում, արյան հիվանդ եմ: Այս ավելով ես ինչքա՞ն աշխատեմ, որ հիվանդանոցից վճարեմ»: Դեկավարներին ամոթանք տալու համար կինը նույնիսկ փորձեց քայլել, որ տեսնեն, թե ինչ տանջանքով է ավլում, հավաքարարի իր գործն անում, ու անաչեն. «Ինձ համար մեկ է՝ ուզում է Քոչարյանը լինի, ուզում է Լեւոն Տեր-Պետրոսյանը: Ուղղակի Լեւոն Տեր-Պետրոսյանին գիտե՛ս ինչի եմ սիրում, որովհետեւ քաջությունը հերթում է: Այ, մենակ դրա համար՝ որ ինքը ահ ու երկյուղ չունի»:

Հանրահավաքի մասին էջ 2:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Կամ ցմահ, կամ համագործակցություն

«Առավոտի» ունեցած տեղեկություններով՝ ապրիլի 12-ին Գյումրիի քաղաքապետ Վարդան Դուրյանյանի դատեր փեսացուի՝ Կարեն Եսայանի սղանության մեջ մեղադրվող Հարություն Սարգսյանին ցմահ ազատազրկում է սղանում, քանի որ խոսքը կանխամտածված դաժան սղանության մասին է: Հասկանալով դա՛ Սարգսյանը, ըստ մեր աղբյուրի, որոշել է համագործակցել նախաքննության հետ եւ բացահայտել սղանության դատավիճակներին:

«Մի կորցրեք չափի զգացողությունը»

«Քաղաքական ուժերը՝ լինեն այս դաժան կողմից գործընկեր, թե այլ ուժեր, մեք է հասկանալի մեկ շատ կարեւոր բան՝ ընտրությունները մայիսի 6-ին ավարտվում են, սակայն կյանքը շարունակվում է, եւ մայիսի 6-ից հետո մենք մեք է արդեն, իրար երեսի մայեք, ուստի չի կարելի այրել կամուրջները, ընտրություններից հետո կյանքը չի ավարտվում, մեր որոշ գործընկերների հորդորում են լինել կոռեկտ, չկորցնել չափի զգացողությունը եւ հիշել՝ ընտրություններ շատ կզան ու կանցնեն, բայց մարդկությունը չի վերանում, չարժե կորցնել մարդկությունը եւ չափի զգացողությունը», - «Առավոտի» հետ բացառիկ գրույցում ասաց Աժ նախկին նախագահ, ՀՀԿ կենտրոնական ընտրական շտաբի ղեկավար Արախանյանը:

Կարդացեք էջ 3:

Լեւոն Տեր-Պետրոսյանը զայրացել է

Aravot.am-ի տեղեկություններով՝ այս օրերին գործնական այցով Բրյուսելում են գտնվում «Հանրապետություն» կուսակցության առաջնորդ Արամ Սարգսյանը, Փաստաբանական խմբի նախկին ներկայացուցիչ Անդրանիկ Քոչարյանն ու ԱԳԼ ՆԱՏՕ-ի բաժնի վարչության նախկին ղեկավար Արամ Սարգսյանը: Սակայն Օսկանյանի հրամանով 2008-ին կեղծված ընտրություններից հետո աշխատանքից ազատված Մարթա Այվազյանը: Այդ նպատակների մասին, եւ թե ո՞վ է դրա նախամեծնողը եղել՝ հավելյալ մանրամասներ տարգել մեզ չհաջողվեց: Փոխարենը՝ մեր աղբյուրները հավաստիացնում են, թե ընդդիմադիր գործիչների այս «վուայածը» բավականին զայրացրել է ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանին, ինչից ենթադրվում է, որ այս այցի մասին նա տեղեկացված չի եղել:

ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

Ասուլիս
Այսօր, ժամը 11-ին, «Հայելի» ակումբի հյուրերն են «Միավորված հայեր» կուսակցության նախագահ Ռ. Ավագյանը եւ փոխնախագահ Հ. Հովհաննիսյանը:

Եղանակ
Երեւան + 7 + 23,
Շիրակ - 1 + 17,
Կոտայք - 1 + 17,
Գեղարքունիք - 1 + 17, Լոռի + 3 + 19, Տավուշ + 7 + 21,
Արագածոտն լեռներ - 1 + 17, Արագածոտն նախալեռն. + 5 + 22, Արարատ + 5 + 23, Արմավիր + 5 + 23, Վայոց ձոր լեռներ - 1 + 17, Վայոց ձոր նախալեռն. + 5 + 23

ՄՈՒՏԵԸ՝
ԼԵՐՍԻ ԿՈՂՄԻՑ

Երբ հարցնողն արթուն է



Ամեն մի մարդ, ինչպես նաև ամեն մի ազգ արժանի է հարգանքի՝ անկախ նրա աշխարհագրական դիրքից և մարդկային քաղաքակրթությանց իր հոգեւոր ցվիրաբերումից: Եթե իհարկե մարդն այդ կամ այդ ազգն իրեն չի համարում մյուսներից ավելի լավը, ուժեղն ու իրավաստը, թվացյալ տիրապետողն ու իր իսկ զանազանությունը ուրացողը: Բանի որ աշխարհին և հարեւաններին ուղղված ժամանակների մեջ որդեգրված անդամների այդ կենսակերպը ոչ թե տիեզերական ցերեզմանության մասնաճյուղ է, այլ ընդամենը իրականությունից փախչելու ժամանակավոր մոռացության թմրադեղ...

Կան հին, բայց ոչ հնացող հարցեր, որոնք թվում է, թե զրոյանում են շուրջ կամ ջնջվել են զրոյանում: Բայց հարցերը, այնպես, միշտ էլ ժամանակի անդրդր թողնում են կողմ հրելով՝ հայտնվում է նա՛ հարցնողը:

Այդպես շատ տարիներ առաջ Ջավախքում Գայլ մականունով նշանավոր սանձազերծ ու անտերասան, սղախությունների զանազանությունն ուրիշի ունեցվածքը հանդիսանալով դիմաց հայտնվեց տասնչորս տարեկան մի տղան: Եվ զրոյանում այդ հարցնողն էր: Ընկալում բոլորի աչքի առաջ երեխան մոտեցավ իր գեղեցկուհի տիկնոջ հետ խնամքով ընտրող նշանավոր Գայլին, բարեկեց ու կանգնեց դիմաց: Գայլը, մտածելով, որ ինչ-որ բան է ուզում խնդրել իրենից, հարցրեց՝ խնամք ուզո՞ւմ ես, տղա ջան:

- Ոչ, - ասաց տղան, - շնորհակալ եմ: Ուղղակի եկել եմ ձեզ հարցնելու՝ ինչո՞ւ սղախեցիք իմ հորը, - զրոյանում խառնեց տղան ու անմիջապես էլ զրոյանեց ձեռքով, գեղեցկուհի կնոջ աչքի առաջ, դանակահարեց անդամների թվացող Գայլին: Գայլը տեղում մահացավ, բանի որ դանակը սիրտն էր խրվել: Իսկ արդեն Գայլից պատված ժողովուրդը զարթոյան կանգնեց տղային, հետո արդեն գայլապատ ժողովուրդը շթողեց նաև, որ զրոյանում դատեն, ես փախցրեցիք երեխան...

Չգիտեմ հետագայում ի՞նչ ճակատագիր ունեցավ այդ զրոյանի հարցնողը, բայց զրոյանությունն այս և վերջինների վերջին մի բանի օրերին հետեւելով թուրք մտավորականների՝ հայերից ցերեզմանում խնդրելու կոչին, ես օրի նրանց ազնիվ երամին միացող թուրքիայի արժանապատվությանը մտահոգված եմ իրենց հիշողությունները արհեստականորեն չջնջած հարյուրավորների: Այսինքն թե՛ մեր օրերում արդեն հայտնվեցին թուրքեր, ովքեր կարծես թե չեն վախենում նախ ի հայերի աչքերից, բանի որ նրանց աչքերում արդեն մի հին, բայց երբեք չհնացող ողբերգության խորհուրդ կա, եւ աչքերը նրանց արդեն դատարկ չեն, բանի որ ամեն մեկն ու յուրաքանչյուրը տեսնում են, գիտեն, որ հարցնողը շարունակ արթուն է, եւ նույնիսկ իրենց սիրելի երեխաների ժողովների մեջ եւ իրենց թնի մեջ ազգան անընդհատ տեսնելու ու լսելու եւ անողորմաբար մնացած հավերժական հարցը:

- Ինչո՞ւ սղախեցիք իմ հորը...

ՄԵՐՈՒԹԱՆ ՏԵՐ- ԳՈՒԼԱՆԱՆ

«Կներեք, որ ձեզ հետ հանդիպմանը մենք մուրաբա չենք բերել»

Եղեգնաձորում հայտարարեց Լեւոն Տեր-Պետրոսյանը

Երեկ ՀԱԿ-ի քարոզարշավը Վայոց ձորի մարզում էր: Եղեգնաձորում Լեւոն Տեր-Պետրոսյանը իր ելույթի սկզբում եղեգնաձորցիներից նախ ցերեզմանում խնդրեց. «Կներեք, շատ կներեք, որ ձեզ հետ հանդիպմանը մենք մուրաբա եւ 5000 դրամ կաշառք չենք բերել»: Լա նշեց, որ Սերոբ Սարգսյանը ոչ մի համակիր չունի, եւ ինչպես մի բանի օր առաջ է գոռով եղեգնաձորի իր հավաքին բերել դոկտորների պաշտպանների, բուժաշխատողների, այնպես էլ 2008-ին Հանրապետության հրապարակ էր բերել՝ ավտոբուսներով. «Կես ժամ հետո 200 հազար մարդը թողեց Լեւոնի հրապարակը, եկավ միացավ մեր հանրահավաքին: Դա նորից ցույց է տալիս, որ նա այս երկրում ձայն չունի: Դիմա էլ այն վախճանները, որ չեն եկել, տներում նստած են, ձեզ նախանձում են, որ այդքան համարձակություն չունեն, որ գան, ներկա լինեն այս հավաքին, բայց նստած տանը անհիմուն են Սերոբ Սարգսյանին»: ԴՅ առաջին նախագահը նաև նշեց, որ Ալեքսանդր Մյասնիկյանից սկսած՝ ոչ մի իշխանություն չի կրակել իր սեփական ժողովրդի վրա. «Առաջին անգամ զրոյանում մեջ կրակել են Ռոբերտ Քոչարյանն ու Սերոբ Սարգսյանը: Ձեզանից ո՞վ կուզի, որ իր երեխան արդի այնքան, ինչպես դուք եք արդեն, ընտրեք Սերոբ Սարգսյանին, եւ մեր երեխան ձեզանից ավելի վատ է աղոթելու: Ես ձեզանից չեմ եկել մայն խնդրեմ, եթե գոհ եք այս իշխանությունից՝ խնդրեմ, գնացեք ձայն տվեք, բայց ի՞նչ է զրոյանում մեզ, մենք սրանցից ի՞նչ ենք վախենում»: ԴՅ առաջինը հեզեց ՀՀ-ի



խոստումները. «Լոր ատոմակայան ենք բացելու, Դիլիջանը դարձնելու ենք ֆինանսական կենտրոն, եւ «Արմենիկում», բան, ինչ ասես ասեցին: Ինչքան շատ խոստումներ են տալիս, նշանակում է՝ այդքան շատ են գողանում այս ժողովրդից: Ես այդպիսի խոստումներ չեմ տալիս՝ մի խոստում եմ տալիս՝ այդ ամբողջ գուժարը, որ գողացվել է ժողովրդից, մտնելու է բյուջե՝ 1-2 տարվա ընթացքում: Սերոբ հաստատելու ենք օրենքի իշխանություն, մենք անելու ենք այնպես, որ չվախենանք ոստիկանությունից, նրա մեջ զարթոյանի տեսնեք: Այսօրվա գյուղատնտեսը, վստահ եմ, մենք մարդ նորմալ, մեզից լավ մարդիկ են, դոկտորի տնօրենները: Ոստիկանները դուք գիտե՞ք՝ մասնակցում են այս թալանի, ո՛չ, ոստիկանություն մենք մարդ նորմալ թշվառ են: Լրանք չէ՞ր ուզենա զարթոյան լինեցիք ձեզ»: Լիկոլ Փաշինյանն էլ ասաց, որ եկել է վերջապես ասելու, թե երբ

է լինելու իրենց խոստացած հեղափոխությունը, որի մասին մարդիկ անընդհատ իրեն հարցնում են. «Այդ օրը նշանակված է, այդ օրը մայիսի 6-ն է: Այդ օրը մենք Հայաստանում ղեկավար կհրականանք հեղափոխություն: Այդ հեղափոխությունը ընտրական տեղամասերում է տեղի ունենալու, մենք բոլորս ենք անելու՝ իրար հետ: Այդ հեղափոխությունը տեղի է 30 վայրկյան»: Եղեգնաձորցիները տեղյակ չէին 30 վայրկյան ակցիայի մասին, ուստի Լիկոլ Փաշինյանը մանրամասնեց, թե ինչպես են թվարկելու եւ թվաթերթիկը գցելու տուրի մեջ՝ տեղավորվելով 30 վայրկյանում. «Մենք գիտենք՝ ինչ ենք անում, գալիս են, անձնագրեր են հավաքում, տարբեր առաջարկներ են անում, նույնիսկ աշխատանքից ազատելու տարբեր սղախանքներով ուզում են ետ դառնալ ձեզ մեր հանդիպումներից, շփումներից»:

ՀՊԻԹՄԻՍԵ ՁԵԲԵՅԱՆ

«Զրոյանությունները փոքր ու չկայացած մարդիկ են»

Թիվ 6 ընտրատարածքում զրոյանությունների թվաքանակը, ԲՀԿ ներկայացուցիչ Վահան Կարապետյանը ՀՀԿ թեկնածու Ռուբեն Հովսեփյանի մասին որոշ արտահայտություններ էր հնչեցրել՝ ասելով, որ Աշխատանքային իրավիճակը ծայրահեղ լարված է: Ռուբեն Հովսեփյանը անդրադարձել է զրոյանությունների թվաքանակի հայտարարությանը: «Ինձ համար ակնհայտ է, թե ինչու է Վահան Կարապետյանը նման հայտարարություններ ու կանխատեսումներ անում, մնում է, որ ինքը դա գիտակցի: Իսկ մեր հանրության համար ասեն, որ լինելով Աշխատանքային իրավիճակ՝ 6 տարի ձգտել են, որ համայնքում մթնոլորտը խաղաղ ու հանգիստ լինի: Ծատերն են տեսել՝ արդեն եմ բնակիչների հոգսերով, շատ բան արել, որ մեկի մատը փուշ չմտնի, եւ այդ ամենը՝ առանց թմբկահարելու: Էլ ուր մնաց, թե այսօր հանդուրժեմ, որ որոշ մարդիկ իրենց կեղտոտ քաղաքական խաղերի համար փորձեն արհեստական լարվածություն ստեղծել եւ արյան կոշեր հնչեցնել Աշխատանքային: Ես արդեն որոշակի մտավայրություն ունեմ, որ այս կերպ թեկնածուներ փորձում է կանխավ արտահովարել իր կողմից մեղադրվելիք ինչ-ինչ գործողությունները՝ դրանք փորձելով օր առաջ վերադարձ: Եթե ինքուզգամ որեւէ լարվածություն, առաջինը կփորձեն չեզոքացնել այն: Մեզ համար

կարեւորը մեր բնակիչների ազատ ընտրելու հնարավորության ապահովումն է եւ ազնիվ մրցակցության դաշտի մասին: Բարոյական, զարգացող մարդը բարոյական է մնում ինչպես կյանքի տարբեր իրավիճակներում, այնպես էլ քաղաքականության մեջ: Մեր ընտրողներն արդեն են սովորական առօրյա կյանքով: Այդ ոճանք են իրենց երազներում անապատներ ու խառնաշփոթ տեսնում: Մասնավոր արդեն բազմիցս է գրվել, թե իրականում այդ որ ուժերն են, որ իրենց քարոզչությունը կարողանում են տարբեր թաղային հեղինակությունների միջոցով, եւ ինչպես ավելի վաղ ասել եմ՝ «գողն ավելի բարձր է գոռում՝ բոցեր գողին»: Իրականում իրենք մեր աշխարհային զրոյանությունը չեն կարողանում իրենց կեղտոտ տեսնողները միջնա Վերջ կիրառել, ուստի մնացել են զրոյանական շանտաժի հույսին՝ չգիտակցելով, որ կենսագրությանը ու կատարած աշխատանքով միայն կարող են ստանալ ընտրողի վստահության թվեցնել եւ ոչ թե այլ թեկնածուներին գողարտելու ու վարկաբեկելու ճանապարհով: Միեւնույն է՝ գողարտողներն այնքան փոքր ու չկայացած մարդիկ են, որ անգամ նրանց այդ գաղախությունները ոչ միայն չեն կարող որեւէ նշանակություն ու ազդեցություն ունենալ, այլև ուղիղ հակառակը՝ իրենց սուր արձագանքն են գտել համայնքում ու հարուցել աշխատանքի մեղադրությունները»:

ԲՀԿ-Կ անակցվածներ է խոստանում

«ԲՀԿ-Կ անակցվածներ ունի 100 տոկոս այն ծայրերի, որոնք որ զրոյանություն են թվարկել ԲՀԿ-ի օգտին: Կարեւորը, որ մեզ թվարկողների 100 տոկոսն արտաքերտի արձանագրություններում որոշեց արդյունք: Թե մյուս ուժերն ի՞նչ տոկոսներ են իրենց արտահովելու եւ ինչի՞ հաշվին, դա իրենց խնդիրն է: Բայց, Աստված մի արասցե, որոշեցի որեւէ բան տեղի ունենա մեր ծայրերի հաշվին: Այնպես նրանց, ովքեր կփորձեն ընտրություններն անորակ կերպով կազմակերպել կամ անցկացնել՝ բազում անակցվածներ կտրասեն»,- այսպես արձագանքեց ԲՀԿ համամասնական ցուցակում ընդգրկված եւ ԲՀԿ Գործիք տարածաշրջանի զրոյանություններ Սիգրան Ուրիխանյանը Aravot.am-ի հարցին, թե մնացած 10 տոկոսից ԲՀԿ-Կ ի՞նչ անակցվածներ ունի: Հիշեցնեց, որ Սյունիքի ՀՀԿ-ական մարզախորհուրդի հաշտարարում էր, որ Սյունիքում ՀՀԿ-Կ 80 տոկոս մայն ղեկավար է հավաքել, այժմ արդեն խոսում է ՀՀԿ-ին տրվելիք 90 տոկոս ծայրերի մասին: Ուրիխանյանից հետաքրքրվեցիք՝ ընդհանուր առմամբ ԲՀԿ-Կ այդ տարածաշրջանում որքա՞ն մայն է անակցված: Պատասխանը եղավ. «Եիշտ այնքան, որքանով որ ԲՀԿ-Կ այսօր ունի վստահություն, որքանով հասարակությունն այսօր մեզ հետ կապում է որոշակի հույսեր եւ աղաչանքներ ուղղված բարեփոխումների, ռեֆորմների՝ դրական կյանք: Որակական փոփոխությունների առումով՝ հավատ: Կարծում եմ, որ այդ ծայրերը գերակշռող են»: Անակցված ծայրերի տոկոսային հարաբերության մասով էլ մեր գրուցակիցը նկատեց. «Չէի ցանկանա այսօր ինչ-ինչ որեւէ թիվ, որոշեցի կոտեկությունը զրոյանություն մրցակցից քաղաքական ուժերի հանդեպ, ի տարբերություն մյուսների, ովքեր փորձում են կոտեկությունից դուրս գալ»:

Լ. Գ.

Դատական դոմբաց Գիստե-
րը լուսաբանող լրագրող-
ները մշտապես տատանու-
թյունների մեջ են հայտնվում, երբ
փորձում են նախագահող դատա-
վորից թույլտվություններ ստանալ
լուսանկարելու, տեսանկարահա-
նելու, ծայնագրելու համար:

Այդպիսի մի տատանության մեջ
ընկանք օրեր առաջ, երբ «Առա-
վոտ» ու «Ա1+»-ը ՀՀ վարչա-
կան դատարանում խնդրեցին
դատավորին, որդեսգի Ես թույլ
տա լուսանկարել, նկարահանել
«Ժառանգություն» կուսակցության
անդամներ, Աժ տատանավոր-
ները ընդդեմ երեսնի քաղաքա-
պետ Տարոն Մարգարյանի որոշ-
ման դեմ հայցով դատական
նախնական Գիստը: Դատավոր
Կարեն Ավետիսյանն ասաց, որ
Վարչական օրենսգրքը նման
ընթացակարգ չի սահմանել, իսկ
երբ «Առավոտը» մեջ բերեց ԶԼՄ
գործող օրենքը, դատավորը
դարձյալ ողնեց իրեն: Ստաց-
վեց, որ վարչական դատարան
արտոնյալ կարգավիճակ ունեցող
հատուկ դատարան է, քանի որ,
ի տարբերություն այլ դատարան-
ների, չի աղանակում դատական
Գիստերի հրապարակայնությունը,
չի հարգում ԶԼՄ գործող օրենքը,
չի հարգում մարդկանց՝ անբող-
ջական տեղեկատվություն ստա-
նալու իրավունքը: Ավելին՝ լրագ-
րողը չի կարողանում լիարժեք
մասնագիտական գործունեություն
ծավալել վարչական դատարա-
նում:

Լրատվամիջոցները առաջնորդ-
վում են նաև ՀՀ Քաղաքացիա-
կան դատավարության օրենսգրքի
114 հոդվածի 3-րդ կետով, որի
համաձայն՝ «Գործին մասնակցող
անձինք եւ դոմբաց դատական
Գիստին ներկա գտնվողները իրա-
վունք ունեն կատարել գրառու-

Վարչական դատարանում ԶԼՄ օրենքը չի գործում

Լուսանկարելու եւ տեսանկարահանելու թույլտվությունը՝ օրվա հարց



ներ, սղագրություն եւ ծայնագրու-
թյուն: Դատական Գիստի կինո եւ
լուսանկարահանումը, տեսաձայ-
նագրումը, ինչպես նաև հեռա-
ձայնումը ուղիղ լուսանկարա-
տեսություն կատարվում են կող-
մերի համաձայնությամբ՝ գործը
քննող դատարանի թույլտվու-
թյամբ»: Ստացվում է, որ ընդհա-
նոր իրավասության, վերաբնիչ,
վճարելի, անգամ Սահմանադրա-
կան դատարանում կարող ենք
տեսաձայնագրել, նկարահանել,
լուսանկարահանել՝ ստանալով
դատարանի թույլտվությունը, իսկ
վարչական դատարանում ոչ:

Ի դեպ, 2003 թ. ԱՄՆ իրավա-
բանների ընկերակցության կողմից

հրատարակված «Դատական
լրագրողի ուղեցույցում» (հեղինակ-
ներ՝ Արաբկիր եւ Քանաթե-Յեյ-
թյուն ընդհանուր իրավասության
դատարանի նախագահ Միեր
Խաչատրյան եւ իրավաբան Դա-
վիթ Խաչատրյան) «Ի՞նչ կար-
գով է լրագրողը դիմում դատա-
կան Գիստը ծայնագրելու կամ
նկարահանելու թույլտվություն
ստանալու համար» հարցը այս
դարձաբանումն է ստացել.
«Լրագրողը նման խնդրանքով դի-
մում է դատարանին՝ մինչև դա-
տական Գիստը կամ դրա ընթաց-
քում: Ամեն դեպքում, նկարահա-
նելու թույլտվության հարցը լիար-
ժեքում է քննվի դատական Գիստում, եւ

այդ մասին ընդունած որոշումը
վերջնական է»:

Սակայն, եթե հիշում եք, Երկ
վարչական դատարանում (դա-
տավոր Արգիշտի Ղազարյանի
նախագահությամբ), երբ քննվում
էր «Ավետք ՄՊԸ»-ն ընդդեմ Հե-
ռուստատեսության եւ ուղիղի
ազգային համեմատողովի գործը,
լրագրողները դիմեցին դատավո-
րին՝ տեսանկարահանելու թույլտ-
վություն ստանալու համար: Դա-
տավորը դատասխանեց. «Դուք
դատավարության կողմ չեք՝ մի
խանգարեք, ընդամենը կարող եք
նստել ու լսել»:

Ավելին, զավեշտի վերածվեց
դատավորի մեկ այլ հայտարարու-
թյուն է. «Միգուցե մեր մասնագի-
տական գործունեության ընթաց-
քում ուզեցաք նկարահանել նաև
ինչ-որ մեկի նմանաչափը»:

Մարգարից մեկում ստանալու
գործով դատարանության ժամա-
նակ, դատավորն արգելեց նկա-
րահանել, հարկ չհամարելով
դատաբանությանը, թե ինչի հա-
մար, քանի որ դատավարության
կողմերի կարծիքներն էլ չէր հարց-
րել: Դատավորն անգամ չգիտեր,
թե կա եվրոպայի խորհրդի Լա-
խարաների կոմիտեի «Ուղղված
Եվրոպայի խորհրդի անդամ երկր-
ներին լրատվամիջոցների կողմից
քրեական դատավարության վե-
րաբերյալ տեղեկատվություն հա-
ղորդելու մասին» թիվ 13 Հանձ-

Չեխական երեք քաղաքներ-
ում՝ Յիվկայում, Բոնոյում
եւ Պրահայում անցան երեք
օրերին շեխահայերը տարբեր ձեռ-
նարկներով ոգեկոչեցին Հայոց ցե-
ղասպանության գոհերի հիշատա-
կը: Ապրիլի 24-ի առավոտյան
Պրահայում շեխահայերի մի խումբ՝
ՀՀ դեսպան Տիգրան Սեյրանյանի
գլխավորությամբ, ծաղիկներ դրե-
ցին «Մուսա լեռան 40 օրը» հան-
րահայտ գրքի հեղինակ Ֆրանց
Վերֆելի ծնված տան եւ արդար
Վիլսոնի հուշարձանին: Այստեղ
Հայաստանի դեսպանը հանդես
եկավ նաև հակիրճ ելույթով, ներ-
կայացնելով ԱՄՆ 28-րդ նախա-
գահ, հաղաղության Լոբելյան մր-
ցանակի դափնեկիր եւ Հայկական
հարցի արդարացի լուծման ջա-
տագով Վիլսոնի ընդունած որոշ-
ումների կարևորությունը: Այնուհե-
տե հայ համայնքի հարյուրավոր
ներկայացուցիչներ մեծ թատառ-
ներով, Հայաստանի ու ԼՂՀ դրոշ-
ներով անցան Պրահայի Հանրա-
պետության հրապարակից մինչև
Հին քաղաքի Ստարոմենստկա
հրապարակ՝ հանրահավաք-երթի
ընթացքում շեխերեն ու անգլերեն
կարդալով հայ ժողովրդի դա-
հանքները եւ ակնկալեցին: Չե-
խահայերը թուրքիայից լուսան-
չում էին իր կատարած հանցանք-
ների ճանաչում, իսկ Չեխիայից
հետևելու եվրոպական ընտանիքի
անդամ այն թույլտվություններին, ու-
րբ արդեն ճանաչել են Հայոց ցե-
ղասպանությունը:

Օրվա երկրորդ կեսին, Սուրբ
Երիայի եկեղեցում Չեխահայոց հո-
գետոր հովիվ Բարսեղ վարդապետ
Փիլավյանը մատուցեց հոգե-
հանգստյան ժամերգություն, որի

Չեխահայությունը ոգեկոչեց Հայոց ցեղասպանության 97-րդ տարելիցը

ավարտին հանդես եկավ արդիւ-
սանչորսյան քարոզով, մշտելով, որ
«ոչ միայն սպանվածներ, այլև աշ-
խարհին ցույց ենք տալիս, որ ո՞ն-
րագործները լիարժեք են լուսանկար-
ելու»: «Քրիստոսի հարությունը տեսած
ազգը չի կարող մահանալ»,- աս-
աց հայր սուրբը: Ժամերգությանը
ներկա էին Չեխիայում ներկայաց-
ված մի շարք երկրների դեսպան-
ներ, խորհրդարանի եւ կառավա-
րության ներկայացուցիչներ, դիվա-
նագետներ: Հայաստանի դեսպան
Տիգրան Սեյրանյանը իր ելույթում
անդրադարձավ ոչ միայն ցեղաս-
պանության տված դասերին, այլև
հայ համայնքի ներկայացուցիչնե-
րին կոչ արեց համախմբվել Չեխի-
այի հայկական կազմակերպու-
թյունների, եկեղեցու եւ դեսպանու-
թյան շուրջ՝ մեր հակառակորդնե-
րին արժանի հարված տալու, եւ
Չեխիայի կառավարության կողմից
Հայոց ցեղասպանությունը ճանա-
չելու նպատակով աշխատանքներ
տանելու համար:

Այնուհետե ելույթ ունեցավ «Ար-
մենիա ակումբ» կազմակերպու-
թյան նախագահ Տիգրան Աբրա-
համյանը, ով ներկայացրեց ոչ մի-
այն ցեղասպանությանը գոհ գնա-
ցած հայ մտավորականության
փաստը, անցած տարիներին
կազմակերպված կարեւոր ձեռ-
նարկները, այլև շեխ հունանիստ
Կարել Հանսայի գրած անգնահա-
տելի աշխատանքը՝ «Արեւելի
սարսափները» գիրքը, նրա հա-
յանդաստ գործունեությունը ան-
ցած դարի քսանական թվական-
ներին:



Ընթերցվեցին նաև Չեխիայի
կաթոլիկ եկեղեցու առաջնորդ,
Պրահայի արքեպիսկոպոս, կաթ-
ոլիկա Դոմինիկ Դուկայի եւ սեմա-
տոր Յարոմիր Շտեյնիայի ու-
ղերձները, որոնցում նրանք իրենց
աջակցությունն էին հայտնում հայ
ժողովրդին եւ մեկ անգամ ես հիշ-
ատակում վերջինի հայտնի գիրքը:
Ելույթներից հետո հանդես եկավ
Կարլի համալսարանի երգչախում-
բը՝ հայտնի դիրիժոր Հայկ Ութի-
յանի ղեկավարությամբ: Չեխ հա-
մալսարանականները կատարեցին
Կոմիտասի եւ Եկնայանի ստեղծա-
գործությունները, հատկապես Պա-
րապարհից: Եկեղեցու հարեանու-
թյամբ գտնվող Մարիամ եւ Հրայր
Ղարիբյանների GH դատկերա-
սահուն բացվեց շեխ հայտնի նկա-
րիչ Յիրմի Լուսելի Հայաստանի
նկարված գեղանկարչական աշ-
խատանքների ցուցահանդեսը,

որին ներկա էր նկարչի այրին:
Լախոթեին՝ ապրիլի 22-ին Վիս-
չինայի երկրամասի Յիվկա քա-
ղաքում «Ուրարտու» հայ շեխական
կազմակերպության նախագահ
Լեւոնյանը Սարգսյանի ղեկավա-
րությամբ տեղի ունեցավ «Լրանք
էլ իրավունք ունեին, կարող էին եւ
ուզում էին արդեւ ու արարել» խո-
րագրով միջոցառումը, որին իրենց
մասնակցությունն էին բերել Չեխի-
այում ՀՀ դեսպան Տիգրան Սեյ-
րանյանն ու Չեխիայի, Սլովակիա-
յի եւ Դոնգարիայի հայերի հոգետոր
հովիվ Բարսեղ վարդապետ Փի-
լավյանը: Հայկական խաչքարի
մոտ ծաղիկներ դնելուց հետո,
հայր Բարսեղ Սուրբ Հոգի եկեղե-
ցում կատարեց հոգեհանգստյան
ժամերգություն, որից հետո ելույթ-
ներ ունեցան Հայաստանի դե-
պտանն ու «Ուրարտու» կազմակե-
րպության նախագահը՝ անդրա-

դառնալով ցեղասպանության ճա-
նաչման կարեւորությունն ու հայ
ժողովրդի արդար լուսանկարչի:
Ներկաները դիտեցին Հայոց մեծ
եղեռնի նկարված փաստավավե-
րագրական Ֆիլմ, իսկ այնուհետե՝
եկեղեցու շրջակայքում բացված
ցուցահանդեսը: Հաջորդ օրը, ապ-
րիլի 23-ին Չեխիայի Բոնո քաղա-
քի եկեղեցիներից մեկում հայր
Բարսեղը մատուցեց հոգեհանգստ-
յան կարգ, որից հետո տեղի հա-
յության անցելու ելույթ ունեցավ ՀՀ
դեսպան Տիգրան Սեյրանյանը, մի
անգամ ես մշտելով, որ Հայոց ցե-
ղասպանության ուրացման քաղա-
քականությունը եղեռնի անմառու-
ղակի շարունակությունն է: «Հան-
ցագործության հետքերը սրբելու
յուրաքանչյուր փորձ նոր հանցա-
գործություն է»,- ասաց նա: Իսկ
երեկոյան ՀՀ դեսպան Տիգրան
Սեյրանյանը, Պրահայից «Արմենի-
ա ակումբ» կազմակերպության
նախագահ Տիգրան Աբրահամյա-
նը եւ «Օրեր» ամսագրի գլխավոր
խմբագիր Հայկ Ասատրյանը
ներկա գտնվեցին հանրաճանաչ
ջազային դաշնակահար Տիգրան
Համասյանի մենահամերգին՝ Բո-
նոյի «Ջազֆեստ» փառատոնի շր-
ջանակներում: Տիգրանի անկրկնե-
լի ելույթը հայ ժողովրդի վերածնե-
րի ներկայացնել էր, որ ամենաջերմ
ընդունելությանն արժանացավ
շեխ հանդիսատեսի կողմից: Տիգ-
րանի նման հայ տաղանդները
մեկ անգամ ես առաջնություն են,
որ հայ ժողովրդին երբեք հնարա-
վոր չի լինի ոչնչացնել: Այս մա-
սին խոսեց նաև Հայաստանի
դեսպանը՝ տեղի հեռուստաընկե-
րությանը տված հարցազրույցում:
Չեխահայ համայնքի միջոցառում-
ներին անդրադարձավ նաև շե-
խական հեռուստատեսության եր-
կու այլիք՝ «ՉՏ 24»-ը եւ «Պրիման»:

«Օրեր» ամսագիր, Պրահա

Շաբաթ օրը աստղասերները կնայեն երկնքին

Այս տարի աստղագիտության օրը նշվում է ապրիլի 28-ին. այն շաբաթական տոն է և սովորաբար նշվում է ապրիլից մինչև մայիսի կեսերը ընկած ժամանակահատվածում և սահմանված է այնպես, որ տեղի է ունենում Լուսնի առաջին քառորդը նախորդ շաբաթ օրը (օրինակ՝ 2011-ին այն մայիսի 7-ին էր): Այս նախաձեռնությունը սկսվել է 1973թ. Հյուսիսային Կալիֆոռնիայի աստղագիտական ընկերության նախագահ Դագ Բերգերի կողմից, երբ նա բազմաթիվ աստղագիտական տեղադրեց հասարակական վայրերում, որոնցից ցանկացած հետաքրքրվող հնարավորություն ունենար զնայել երկնքի գեղեցկությամբ: Ներկայումս այս իրադարձությունը արդեն աստարվում է աստղագիտական մի շարք կազմակերպությունների կողմից: Աստղագիտության օրը սովորաբար կազմակերպվում են հասարակական դիտումներ, դասախոսություններ, հանդիպումներ և այլն՝ հասարակությանը մեծ աստղագիտական գիտելիքները և հետաքրքրությունները տարածելու համար: Ըստ Հայկական աստղագիտական ընկերությունից ստացված հաղորդագրության, հայ սիրող աստղագետները («Գուրայթ Ֆոն» կազմակերպությունը՝ Ռուբեն Բուրջախյանի գլխավորությամբ) ապրիլի 28-ին, ժամը 20:30-22:30, Կասկադ համալիրի վերելի հարթակում տեղադրելու են մի շարք սիրողական աստղագիտական, որոնցով բոլոր ցանկացողները կարող են դիտել մոլորակներ, աստղեր, աստղակույտեր և երկնքի այլ հրաշալիքներ:

Տաքսիստը շատ սիրահարված էր, բայց քիչ հաջողված

Օրերս Գ. Սուրբուկյանի անվան թատրոնում կայացավ Սուրեն Սաֆարյանի բեմադրած «Սիրահարված տաքսիստը» ներկայացման յոթերորդ ևստ Ռեյ Կյուրիի «Run for your Wife» գործի: Թարգմանությունը և բեմական տարբերակը Լեոն Սուրբաջյանից էին, զգեստների ձևավորումը՝ Հասմիկ Աղայանից:



Դերերում հանդես եկան Դավիթ Թադևոսյանը, Աննա Հարությունյանը, Ռոզի Ավետիսյանը, Անդրանիկ Էթենճյանը, Մարի Գրիգորյանը և Սարգիս Հակոբյանը: «Սիրահարված տաքսիստը» կատակերգական ներկայացում է, որտեղ հերոսները անկախ իրենց կամքից հայտնվում են ծիծաղելի իրավիճակներում և էլ ավելի ծիծաղելի կերպով դուրս գալիս այդ իրավիճակներից:

Գլխավոր հերոսը՝ տաքսու վարորդ Ջոն Ամիթը, զուգահեռ փողոցներում աղորդ երկու կին ունի, երկուսին էլ շատ է սիրում: Նա հստակ գրաֆիկով այցելում է իր կանանց և միշտ կարողանում է իրեն այնպես թաքցնել, որ տիկնայթ կասկածներ չունենան ամուսնական հավատարմության վրա: Բայց մի օր «ամուսնական» գրաֆիկը խախտվում է... Ավագակներից տատիկին փրկելու արդյունքում Ամիթը հայտնվում է հիվանդանոցում և ոստիկանության տար-

բեր աշխատողների տալիս իր 2 տների հասցեները: Ընտանեկան խառնաշփոթն արդեն ղատարաստ է... Ռեյ Կյուրիի հանրահայտ գործը, որ համարվում է 20-րդ դարի բրիտանական 100 լավագույն դրամատիկ մեկը, կատակերգություն է, որը ենթադրում է դառնիքով լի թատիկայի ծիծաղից ու շլարվի, «զոռ շտա» ինտելեկտին: Մյուս կողմից է՝ կատակերգությունը դեռ չի նշանակում ջրիկություն կամ ճղճոց բեմում, ինչի ակադեմիայից եղանակ Սուրբուկյան թատրոնում: Դերասանները՝ հիմնականում սերիալային,

մի քիչ ավելի էին ճիգ գործադրում՝ հանդիսատեսին զվարճացնելու համար, ինչը արհեստականություն էր հաղորդում նրանց կերպարներին: Իհարկե կային հաջողված կտորներ. տեղ-տեղ լավ էր խաղում Դավիթ Թադևոսյանը, որը լայն հանրությանը հայտնի է որպես Արամ՝ «Երազեից այն կողմ» հեռուստատեսիայից: Սարգիս Հակոբյանը՝ ցույց սերիալի ոստիկան Սեւակը, որը միշտ «իր ակսենում է զգուն» իրավաբանի կերպարում, տվյալ դերակատարում էլի հաջողված ոստիկան էր, Մարի Գրիգորյանը նախկինում ավելի լավ է հանդես եկել այլ ներկայացումներում, օրինակ՝ «Պաշտասար աղբար», «Ինկան բերդի իշխանուհին» և այլն:

«Սիրահարված տաքսիստը» բեմադրությանը կարելի է խիստ չնոտենալ մեկ վերադասումով, որ ռեժիսորից սկսած, դերասաններով ավարտած, բոլորը երիտասարդներ են: Ի դեպ, բավականին հաջող էր բեմի ձևավորումը: Ինչ վերաբերում է ներկայացմանը, այն «միագիծ» էր ու ընդհանուր առմամբ տաղտկալի, չնայած կազմը ի վիճակի էր ավելի զուներ, աշխույժ և «համուկ» ներկայացում անելու: Անկեղծ ասած՝ վերնագիրն էլ մի բան չէր, մանավանդ տաքսիստը հայտնի բառ չէ:

ԳՐԴԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

«Առավոտը» բանցիցս անդրադարձել է Հայաստանում արտերկրյա դեմոկրատների մշակութային նախաձեռնություններին

«Առավոտը» բանցիցս անդրադարձել է Հայաստանում արտերկրյա դեմոկրատների մշակութային նախաձեռնություններին, որոնք, որպես օրենք, հիմնականում բարոզում են իրենց երկրի արվեստն ու մշակույթը: Մեն եղեռնի 97-րդ տարեկիցի առիթով Վիլյուսի ավելի քան 1000 տեղանոց «Կոնգրես» սրահում կայացավ տեղաբնակ հայազգի և Հայաստանից ժամանած արտիստների համատեղ համերգը: «Առավոտը» կաղվեց Լիտվայում Հայաստանի դեստան Արա Այվազյանի հետ: Վերջինս փոխանցեց, որ դեստանատան ճյուղատակը երաժշտարվեստի հայ բարձրակարգ արվեստագետների միջոցով լիտվացիներին մեր դաստնությունն ու արվեստը ներկայացնելու էր: «Երեկոյին ներկա էին բարձրաստիճան դաշտոնյաներ, բաղաբաղական, արվեստի ու մշակույթի գործիչներ, մտավորականներ, զԼՍ-ների ներկայացուցիչներ, որոնց խոսքն ու կարծիքը այս օրերին դոմինանտում են

Բոլոր «լեզուներով» կծանոթացնենք մեր դաստնությանը

Հավաստիացնում է Լիտվայում Հայաստանի դեստան Արա Այվազյանը



Դիրիժոր Կարեն Դուրաբաբյանը ու երգիչ Գեորգ Հակոբյանը՝ Լիտվայի սիմֆոնիկ նվագախմբի հետ:

լիտվական մանուկում: Կարենուրում են Լիտվայի դեստանական սիմֆոնիկ նվագախմբի ելույթը՝ Երեւանի օմերային թատրոնի երաժշտական ղեկավար և գլխավոր դիրիժոր Կարեն Դուրաբաբյանի ղեկավարությամբ, ինչպես նաև միջազգային մրցույթների դափնեկիրներ, լիտվական դիրիժոր Հասմիկ Գրիգորյանի, Երեւանի օմերային թատրոնի ճանաչված բարիտոն Գեորգ Հակոբյանի, դաշնակահար Արմեն Բաբախյանյանի մասնակցությամբ, փոխանցեց դեստանը: Պարոն Այվազյանը տեղեկացրեց նաև, որ համերգին համաշխարհային դասական երաժշտության գոհարների կողքին հնչել են Բաբաբաբյանի «Հերոսական

բալլադը», Տիգրանյանի և Չուխաջյանի օմերաներից Անուշի և Արշակ երկրորդի արիաները և այլն:

Հետաքրքրությանը, թե դեստանը իր դաշտոնավարման ընթացքում ի՞նչ չափով կանդրադառնա հայ մշակույթին, Արա Այվազյանը ղատասխանեց. «Մեր մշակույթի տարածումը արտերկրում, կարծում են, իմ և կոլեգաներիս առաջնահերթ խնդիրը ղետո է լինի: Կոնկրետ մեր դեստանատան առաջին խոշոր նախագիծն էր այս համերգը: Առաջիկայում կանդրադառնանք հայ մշակույթի այլ ոլորտներին ցույց տալու: Պարի, կինոյի, թատրոնի, նկարչության և այլ «լեզուներով» կներկայացնենք ոչ միայն մեր դաստնության անցած էջերը, այլև կծանոթացնենք հայ երիտասարդ արվեստագետներին: Ցանկություն կա, որ փոխադարձաբար Հայաստանում էլ մասշտաբային ներկայացվի Լիտվան ու նրա մշակույթը, ինչին մեր դեստանատանը ղատարաստ է օժանդակել»:

ՍԱՍՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Երեկ ԵՊՀ դաստնության ֆակուլտետի դահլիճում տեղի ունեցավ Արվեստի դաստնության և տեսության UNESCO-ի ամբիոնի վարիչ, արվեստագիտության դոկտոր, դոկտոր Լեոն Չուրաբաբյանի ծննդյան 60 -ամյակին նվիրված ցերեկույթ:

ԵՊՀ գիտխորհրդի քարտուղար Մեհուա Սողոմոնյանը բուհի գիտխորհրդի անունից շնորհավորեց հոբելյարին՝ ԵՊՀ ղեկավարի անունից շնորհելով դաստնությանը՝ Հայ արվեստի դաստնության զարգացման և նոր մասնագետներ կրթելու գործում ցուցաբերած ներդրման համար: ԵՊՀ դաստնության ամբիոնի վարիչ, ԳԱԱ թղթակից անդամ Բաբկեն Հարությունյանը փաստեց, որ Լ. Չուրաբաբյանը, լինելով նվիրյալ հայրենասեր, մշտադեմ բարձր էր ղատակել հայ ժողովրդի դաստնությունը: «Նա աչքի է ընկնում բանիմացությամբ և իր գիտելիքներն օգտագործում է հայ արվեստը բարձրագույնի համար: Նա շատ բան կարող է ասել, բայց չի սիրում իր անունը բարձրաձայնել»: Ամբիոնի վարիչը կարեկրեց նաև Լ. Չուրաբաբյանի հոր՝ Բաբկեն Չուրաբաբյանի գործունեությունը Մատենադարանում: «Նա անմամբ էր Մատենադարան այցելող դաստնությանը ներկայացնելու ամեն ինչ բացատրում անգլերեն, ղարսկերեն և այլ լեզուներով: Նրա հատ-

Տոհմիկ հայրենասերի հոբելյանը

կությունները փոխանցվել են զավակներին»: Պարոն Հարությունյանը նաև հավելեց, որ UNESCO-ն ամենուրեք էլ հեշտությամբ ամբիոններ չի բացում. «Պա Լեոնի ջանքերով բացվեց»:

ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն Արա Աղայանը արվեստի ինստիտուտի աշխատակազմի անունից շնորհավորեց Լ. Չուրաբաբյանին՝ կարեկրեցով տարբեր ոլորտներում նրա բազմաթիվ ներդրումները: «Կառանձնացնեն հատկապես նրա կատարած գիտական ուսումնասիրությունները, հայ կերպարվեստի ճանաչմանն ուղղված քարոզչությունը և մանկավարժական աշխատանքը»:

Նշենք, որ Լ. Չուրաբաբյանը հեղինակ է արտասահմանյան և հայ մամուլում հրատարակված շուրջ 150 հոդվածի և 30 գրախոսականի, որոնց զգալի մասը ծանոթ չեն հայ արվեստաբաններին: Պրոֆեսորը մասնակցել է 45 միջազգային գիտաժողով-



ների, կազմակերպել շուրջ 200 դասախոսություն: 90-ական թվականներին, երբ Հայաստանի կրթական օջախները բայթայ-

ման և լուծարման վտանգի տակ էին, Լեոն Չուրաբաբյանի համատնությամբ 1996թ.-ին ստեղծվեց Արվեստի դաստնության և տեսության UNESCO-ի ամբիոնը: ՀՀ մշակույթի նախարարության ժամանակակից արվեստների վարչության ղեկավար Ալեքսանդր Գեղամյանը նախարարության ոսկե մեդալով հանձնելով Չուրաբաբյանին՝ նրան բնորոշեց որպես տոհմիկ հայրենասերների ընտանիքի անդամ: Բոլորնայի համալսարանի դոկտոր Գաբրիելյա Ուլուհոջյանը հիշատակեց այն հանգամանքը, որ Լեոն Չուրաբաբյանը առաջինն էր, ով ԵՊՀ-ի և Բոլորնայի համալսարանների միջև համամայնագրի կնքումից հետո դասախոսեց Բոլորնայի համալսարանում: Հոբելյարը նշեց, որ սա միայն իր տարեդարձը չէ. «Սա լավ առիթ է, որպեսզի նա նորից տեսնեն վաստակավոր այն մարդկանց, ովքեր նշանակություն են ունեցել իմ կյանքում: Նրանցից շատերը չկան, բայց ուրախ են այսօր տեսնել նրանց զավակներին, դասընկերներին ու գործընկերներին: Առհասարակ, շատերին են ուրախակալ, այդ թվում՝ ուսանողներին: Եթե նրանք չլինեին, ո՞նց ղետո է սովորեցնելիք...»:

ԼՈՒԻՉԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ